ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ Ք. ԳՅՈՒՄՐԻ, ԹԲԻԼԻՍՅԱՆ ԽՃՈՒՂԻ ԹԻՎ 2/14 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՀ ՊԵԿ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆՊԵՏԱԿԱՆԳՆՄԱՆՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՊԵԿ-ԳՀԽԱՇՁԲ-20/019

ք. Երևան «23» Հունիսի 2020թ.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Էդգար Գևորգյանի, որըգործում էՀՀ պետական եկամուտների կոմիտեն կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Պատվիրատու), մի կողմից, և «Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ-ն,իդեմս տնօրե նԼամարա Պողոսովի, որը գործում է«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուս կողմից, կնքեցի սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի թիվ 2/14 հասցեում գտնվող ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր- գնման ժամանակացույցին չի ամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելո ւպայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ)Հրաժարվելպայմանագիր ըկատարելուց նպահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծե լպայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտելէպայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրըխախտեն էական էհամարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին և երկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին և երկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 2.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման- ընդունման արձանագրությունը (հավելված N 2): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե կատարված աշխատանքըկամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և սույն պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է 29,000,000 (քսանինը միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում էայդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագիր կնքելու միջոցով, հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիսներին:

Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

ՍույնպայմանագրովկնքվածՀամաձայնագրերովպարտավորություններնամ բողջությամբկամմասնակիորենչկատարելուհամարկողմերնազատվումենպատասխանատվությունից, եթեդաեղելէանհաղթահարելիուժիազդեցությանհետևանքով, որըծագելէսույնպայմանագիրըկնքելուցհետո, եթեկողմերըչէինկարողկանխատեսելկամկանխարգելել:Այդպիսիիրավիճակներեներկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմականնարտակարգդրությունհայտարարելը, քաղաքականհուզումները, գործադուլները, հաղորդակցությանմիջոցներիաշխատանքիդադարեցումը, պետականմարմիններիակտերընայլն, որոնքանհնարինենդարձնումսույնպայմանագրովպարտավորություններիկատարումը:Եթեարտակարգուժիազդեցությունը շարունակվումէ 3 (երեք) ամսիցավելի, ապակողմերիցյուրաքանչյուրնիրավունքունիլուծելպայմանագիրը՝այդմասինանախապեստեղյակպահելովմյուսկողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույնպայմանագիրնուժիմեջէմտնումկողմերիստորագրմանպահից և գործում է մինչևկողմերի սույն պայմանագրովստանձնածպարտավորություններիողջությամբկատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրիցծագած՝կողմիվճարայինպարտավորությունըչիկարողդադարելայլպայմանագրիցծագած՝հակընդդեմ պարտավորությանհաշվանցով, առանցկողմերիգրավորևկնիքովհաստատվածհամաձայնության: Պայմանագրիցծագածպահանջիիրավունքըչիկարողփոխանցվելայլանձի, առանցպարտապանկողմիգրավորհամաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, և N 2.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի

կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.ԿՈՂՄԵՐԻՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸԵՎՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ
ք. Երևան, Մ.Խորենացու- 3,7	ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր,
ՀՀ ֆինանսների նախարարության	Վարդանանց 23/159
աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկ <<Ինեկոբանկ>>ՓԲԸ Վանաձորի մ/ճ
Հ/Հ 900011030526	Հ/Հ 205022201763 1001
ՀՎՀՀ 02647057	ՀՎՀՀ 06938925
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Է.Գևորգյան _____	Լ. Պողոսովա _____
ստորագրություն	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված N 1
« 23» Հունիսի 2020թ.
կնքված ՊԵԿ-ԳՀԽԱՇՁԲ-20/019 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	կատարման	
						հասցեն	Ժամկետը
1	71241200/501	**ԳՅՈՒՄՐՈՒ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ (ՆԱԽԱԳԾՄԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)** **Գյումրու արտաքին տնտեսական գործունեության միասնական կենտրոնի (այսուհետ ԱՏԳ) կառուցման համար Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 2/14 հասցեում ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ամրացվել է 21.57 հա մակերեսով հողատարածք:** **ԱՏԳ-ի կառուցման առաջին փուլում ամրացված տարածքի 5.5 հա մակերեսով հողատարածքում կառուցվել է ԱՏԳ-ին մաս կազմող ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների սպասարկման միասնական կենտրոն:** 1. Առաջարկվում է ԱՏԳ-ի նախագիծը կազմել Գյումրի քաղաքի Թբիլիսյան խճուղի 2/14 հասցեում գտնվող ՀՀ պետական եկամուտների կոմիտեին ամրացված՝ մնացյալ, 15.5 հա մակերեսով հողատարածքում, լծորդելով այն կառուցված ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման միասնական կենտրոնի հետ՝ վերջնական արդյունքում ձևավորելով 1 միասնական ԱՏԳ կենտրոնի: 2. Նախագիծը կազմել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 թվականի	դրամ	29,000,000	1	ք. Գյումրի, Թբիլիսյան խճուղի թիվ 2/14	Աշխատանքներն իրականացվում են այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 180 օրացուցային օրվա ընթացքում

		սեպտեմբերի 11-ի N-128-Ն հրամանով հաստատված բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները 3. Շինարարական օբյեկտի նախագծային փաստաթղթերը մշակել 2 փուլերով. Առաջին փուլ <<Նախագիծ>>, երկրորդ փուլ <<Աշխատանքային փաստաթղթեր>>: <<Նախագիծ>> փուլը մշակել Պատվիրատուի հետ համաձայնեցված էսքիզային նախագծի հիման վրա: 4. Բեռնատար տրանսպորտային միջոցների մուտքը և ելքը նախատեսել ԱՏԳ մաս կազմող ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման կենտրոնի մուտքի և ելքի գոյություն ունեցող ճանապարհների միջոցով (համաձայն էսքիզային հատակագիծ-սխեմայի): 5. ԱՏԳ կենտրոնում նախատեսել 400-450 հատ բեռնատար տրանսպորտային միջոցների համար կայանատեղեր՝ համապատասխան մուտքի և ելքի ճանապարհներով՝ ապահովելով տրանսպորտային միջոցների ազատ շրջադարձի հնարավորությունը: Կայանատեղերը իրականացնել բեռնված բեռնատարների (առնվազն 60 տոննա բեռնատարողությամբ) տեղաշարժման համար բավարար հուսալիություն և կայունություն ունեցող երկաթբետոնե ծածկույթով: Կայանատեղիում նախատեսել այնտեղ միաժամանակ գտնվող անձանց քանակին համապատասխան քաղաքաշինական նորմերով սահմանված սանհանգույցներ :Կայանատեղիում պատշաճ հսկողություն սահմանելու համար նախատեսել հավասարաչափ տեղաբաշխված հսկիչ կետեր: Կայանատեղիում նախատեսել արտաքին լուսավորության, անձրևաջրերի հեռացման տեսահսկման համակարգեր: Տեսահսկման համակարգը պետք է բավարարի հետևյալ տեխնիկական պայմաններին՝ այն պետք է համալրված լինի տեսագրելու և ձայնագրելու հնարավորությամբ, ընդ որում տեսագրված և ձայնագրված նյութերը պետք է պահպանվեն յուրաքանչյուր օրվա համար առանձին՝ համակարգչում կամ ցանկացած արտաքին կրիչի վրա, որը հնարավորություն կընձեռի պարզորոշ դիտելու և					

		լսելու կատարված տեսագրությունն ու ձայնագրությունը: Տեսագրություններում պետք է նշվեն նաև տեսագրման ամսաթիվը և ժամը: Տեսագրված և ձայնագրված նյութերը պետք է պահպանվեն առնվազն 90 օր: Տեսահսկման համակարգը պետք է ապահովի ամբողջ տարածքի բավարար տեսանելիությունը: 6. ԱՏԳ կենտրոնի մուտքի հատվածում նախատեսել հսկիչ անցագրային կետ՝ 2 հատ 6 մետր երկարությամբ, հեռահար կառավարմամբ արգելափակոցներով: 7. Նախատեսել 25 բեռնատար տրանսպորտային միջոցների համար միաժամանակյա **բեռնաթափման, զննման հարթակ՝ ծածկարանով** (100 մետր երկարությամբ, 12 մետր լայնությամբ, 5.5 մետր բարձրությամբ, մետաղական հիմնակմախքով, տանիքը՝ մետաղական թիթեղյա պրոֆիլով և տոպինգային հատակով): Հարթակում նախատեսել էլեկտրամատակարարման, լուսավորության, արտաքին և ներքին տեսահսկման (սույն առաջադրանքի 5-րդ կետին տեխ. Բնութագրին համապատասխան), հեռահաղորդակցման, հակահրդեհային անվտանգության և հրդեհաշիջման համակարգեր: Հարթակի տանիքի ջրահեռացումը նախատեսել կազմակերպված ձևով: Հարթակում նախատեսել տարբեր քաշերի կշռելու հնարավորություն ունեցող էլեկտրոնային տարբեր կշեռքներ՝ 100 կգ-ից մինչև 1 տոննա կշռելու հնարավորությամբ (նախնական՝ յուրաքանչյուր 3 կամ 4 հարթակի համար մեկ կշեռք հաշվարկով): Հարթակը պետք է ապահովված լինի վերադաս մաքսային մարմնի սահմանած պահանջներին համապատասխան մանրակրկիտ զննման համար անհրաժեշտ սարքերով և սարքավորումներով (նախնական՝ ռենտգեն սարք 2 հատ): Հարթակին կից պետք է կահավորված լինի բեռնատար տրանսպորտային միջոցները բոլոր կողմերի տեսազննելու հնարավորությամբ կահավորված փոսորակ և էստակադա: Բեռնաթափման, զննման հարթակում նախատեսել 25 հատ բեռնատար տրանսպորտային միջոցների թափքի համար միացման շարժական հարթակ՝ ավտոմատ կառավարման հնարավորությունով:					

		8.Նախատեսելբեռնաթափման, զննմանմասնաշենքինկիցպահեստայինմասնաշենք(76 մետրերկարությամբ, 36 մետրլայնությամբ, 5.5 մետրբարձրությամբ, մետաղականհիմնակմախքով, պատերընտանիքը՝սենդվիչպանելներով, տոպինգայինհատակով): Պահեստայինմասնաշենքումնախատեսելառնվազն 20 հաստիքիհաշվարկովբեռնաթափողաշխատակիցներիհամարհանգստիսենյակ, հանդերձարան, ցնցուղարանսանհանգույց՝ գործող քաղաքաշինական նորմերին համապատասխան: Պահեստայինմասնաշենքումնախատեսելօդափոխության, ջեռուցման, ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, արտաքիններքինլուսավորության, արտաքիններքինտեսահսկման(սույնառաջադրանքի 5-րդկետինտեխ. բնութագրինհամապատասխան), հեռահաղորդակցման, ինտերնետկապի, հակահրդեհայինանվտանգությաննհրդեհաշիջմանհամակարգեր: Բեռնաթափմանզննմանմասնաշենքիցդեպիպահեստայինմասնաշենքնախատեսել 5 մետաղականսեկցիոն, ավտոմատկառավարմանհամակարգովմուտքիդարպասներհավասարաչափբաշխվածհեռավորությամբ: Պահեստայինմասնաշենքիտանիքիջրահեռացումընախատեսելկազմակերպվածձևով: 9. **Բեռնաթափման, զննման հարթակին** և **պահեստային** մասնաշենքին կից տարածքներում նախատեսել առնվազն 50 հաճախորդների հաշվարկով սպասարկմանսրահ՝նմաքսայինգործառույթներիիրականացնողպաշտոնատարանձանցհամարառնվազն 20 հաստիքիհաշվարկովվարչականմաս՝ապահովվածհանգստիսենյակով, հանդերձարանով, սանհանգույցով: Սպասարկմանսրահումնվարչականմասումնախատեսելէլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման, օդափոխության, օդորակման, ինտերնետկապի, հեռահաղորդակցման, հակահրդեհայինանվտանգությաննհրդեհաշիջման, լուսավորության, ներքինտեսահսկման(սույնառաջադրանքի 5-րդկետինտեխ. բնութագրինհամապատասխան)համակարգեր: 10. Ավտոտրանսպորտայինմիջոցներիսպասարկմանմիասն					

		ականկենտրոնիգոյությունունեցողպահեստայինմասնա շենքում գոյություն ունեցող պահեստների ծավալով նախատեսելսառնարաններ՝ 2 ռեժիմով՝բացասական(10.5մ*18մ չափերով և 5.15մբարձրությամբ) նդրական (10.5մ*18մ չափերով և 5.15մբարձրությամբ): 11. ԱՏԳ կենտրոնում նախատեսել բեռնատար տրանսպորտային միջոցների համար նախատեսված շարժական ռենտգեն ճառագայթման զննման սարքավորում՝(լրակազմ) առնվազն 6 MB (մեգա էլեկտրոն վոլտ) լարումով, որը կիրականացնի բարձր խտությամբ բեռների զննում ցանկացած վայրում և կունենա նյութերի (բարձր և ցածր խտության բեռների) տարբերակման ֆունկցիոնալ հնարավորություն: 12. Նախատեսել 2 հատ ստատիկ 17 մ երկարությամբ, 100 տոննա կշռողականությամբ բեռնատար տրանսպորտային միջոցների համար կշեռքներ ԱՏԳ կենտրոնի մուտքի հատվածում՝իրենց համապատասխան ծածկարաններով: Նախատեսել գրանցման և ձևակերպման համապատասխան տաղավար, սանհանգույց քաղաքաշինական նորմերին համապատասխան, ինչպես նաև ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման, ջեռուցման, օդորակման, տեսահսկման (սույն առաջադրանքի 5-րդ կետին տեխ. բնութագրին համապատասխան), ինտերնետ կապի և հեռահաղորդակցման, արտաքին լուսավորության համակարգեր: 13. Ավտոտրանսպորտային միջոցների սպասարկման կենտրոնի վարչական շենքի Ա. Մասնաշենքում տալ ներքին հատակագծային լուծումներ՝ մասնակիցների սպասարկման <<Մեկ պատուհան, մեկ կանգառ>> սկզբունքին համապատասխան: 14.ԱՏԳ կենտրոնի տարածքի արտաքին էլեկտրամատակարարման, ջրահառեացման, ջրամատակարարման, հեռահաղորդակցման համակարգերի նախագծերը իրականացնել համապատասխան ծառայությունների կողմից տրված տեխնիկական պայմանների համաձայն՝ առավելագույնս աօգտագործելով ավտոտրանսպորտային միջոցների սպասարկան միասնական կենտրոնի համակարգերի համապատասխան հնարավորությունները և					

		հզորությունները: 15. ԱՏԳ կենտրոնի տարածքում նախատեսել համապատասխան ճանապարհային նշաններ, ցուցանակներ, կանգնակներ և գծանշումներ: ԱՏԳ կենտրոնը պետք է համալրված լինի ապրանքների բեռնման-բեռնաթափման համար անհրաժեշտ տրանսպորտային միջոցներով և բեռների տեղափոխման կամ փոխադրման համար անհրաժեշտ այլ տեխնիկական միջոցներով, ԱՏԳ կենտրոնի տարածքում բեռնատարների ներքին շրջանառությունը կարգավորող էլեկտրոնային համակարգերով, ներառյալ լուսացույցներով, կայանատեղիների համարակալմամբ, բեռնատար տրանսպորտային միջոցները ըստ կոնկրետ կայանատեղի ուղղորդելու, ազատ կայանատեղիների հաշվառման, ելքի ուղեփակոցին մաքսային հսկողությունն ավարտված բեռնատարի տվյալների իրազեկման հնարավորությամբ, ընդ որում՝ տվյալ համակարգը պետք է ինտեգրված լինի մաքսային տարանցման ներկայումս գործող համակարգին և ունենա դեռևս նախագծվող ժամանակավոր պահպանության համակարգին ինտեգրվելու հնարավորություն: ԱՏԳ կենտրոնի տարածքում նախատեսել օնլայն հերթագրման համակարգ: 16. Նախատեսել ԱՏԳ կենտրոնի տարածքի ամբողջական պարսպապատում՝ մետաղական ցանցով, բարեկարգում, կանաչապատում: Կանաչապատ տարածքները համապատասխանեցնել ճարտարապետահատակագծային առաջադրանքով տրված չափաքանակներին: *<u>Լրացուցիչ պայմաններ</u>* - նյութերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերի մանրամասն և սպառիչ սահմանում՝ համաձայն Գնումների մասին օրենքի 13-րդ հոդվածի, - նախագծման վերաբերյալ գործող կարգի պահանջներից զատ՝ մանրամասն չափագրման տվյալների, աշխատանքների ծավալների հաշվարկման տեղայնացված մասնագրերի ներկայացում, - ըստ տեխնիկական պայմանների՝ փաթեթների պատրաստում, նախագծերի համաձայնեցում /Գյումրու քաղաքապետարան, համապատասխան այլ մարմիններ/, - էլեկտրային համաձայնեցվածփաստաթղթերի կազմում, - պատվիրատուին նախագծային փաստաթղթերի					

		ներկայացում՝ թղթային հայերեն և ռուսերեն /հինգ օրինակ/ և էլեկտրոնային տարբերակներով:					

* Գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդհոդվածի 6-րդմասով:

**Նախագծային փաստաթղթերը մշակել հաշվի առնելով ՀՀ կառավարության 04.05.17թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդկետի10-րդենթակետիպահանջները:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011030526
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան _____
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«Գոռտեխպրոեկտ» ՍՊԸ
ՀՀ, Լոռուամարզ, ք. Վանաձոր,
Վարդանանց 23/159
Բանկ<<Ինեկոբանկ>> ՓԲԸ Վանաձորի մ/ճ
Հ/Հ 205022201763 1001
ՀՎՀՀ 06938925
Տնօրեն՝

Լ. Պողոսովա _____
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 2
« 23 » Հունիսի 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԽԱՇՁԲ-20/019 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 2.1
« 23 » Հունիսի 2020թ. կնքված
ՊԵԿ-ԳՀԽԱՇՁԲ-20/019 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն